

Բանալի բառեր՝ բանկային համակարգ, տնտեսություն, ֆինանսական կայունություն, արտաքին և ներքին գործոններ, դրամավարկային բաղաբաղանություն:

ՐՏԴ 336

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Անտեսախոսության թեմա՝

Բանկային համակարգի կայունության ապահովման հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում

Ռաֆիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Եղթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

Գիտական ղեկավար՝

Աշոտ ԲԱՅԴՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ցանկացած երկրի տնտեսության կայուն զարգացման կարևոր նախապայմաններից է հանդիսանում բանկային համակարգի կայունությունը: Ընդհանուր առմամբ, բանկային համակարգի կայունությունը կարելի է դիտարկել մի շարք չափանիշներով, դրանցից են՝ ֆինանսական, տնտեսական, քաղաքական, բարոյական, գործառնական, գործունեության ուղղությունների, ժամանակային, կադրային և կազմակերպչական¹: Բացի կայունության նշված տեսակներից, ժամանակակից մասնագիտական գրականության մեջ հանդիպում են նաև այլ կայունության տեսակներ՝ հավասարակշռված և ոչ կայուն հավասարակշռված, հաստատուն և փոփոխական, արագ զարգացող, հավասարաչափ զարգացող և անհավասարաչափ զարգացող, հասարակական օգտակար կայունություններ և այլն²:

Ընդհանուր առմամբ, կարելի է առանձնացնել բանկային համակարգի կայունության հետևյալ հատկանիշները՝

- բանկային համակարգում ցնցումների բացակայությունը,
- բանկերի գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների աճի միտումները,
- բանկային համակարգի վրա արտաքին բացասական ազդեցությունների կամ անհամամասնության ուժգնացման դեպքում վերջինիս հավասարակշռության պահպանումը,
- բանկային գործունեության ռիսկերի գնահատման և դրանց արդյունավետ կառավարման հնարավորությունների առկայությունը:

Որպես բանկային համակարգի կայունության առանձնահատուկ տեսակ առանձնացվում է ֆինանսական կայունությունը, որի առանձնահատուկ դերը կայանում է նրանում, որ դրանից է կախված բանկային գործունեության բոլոր ուղղությունները: Ավելին, յուրաքանչյուր առևտրային բանկի ֆինանսական կայունությունից է կախված նաև ցանկացած երկրի բանկային համակարգի կայունությունը:

Ժամանակակից տնտեսության, այդ թվում՝ վերջինիս ֆինանսական համակարգի ընդլայնողականացման համատեքստում, բանկային համակարգի կայունության ապահովումը միայն մեկ երկրի ինդիք չի հանդիսանում, այլ վաղուց վերածվել է միջազգային մակարդակով քննարկվող հիմնախնդրի: Ներկայում ֆինանսական ծառայությունների անսահմանափակ ցանցը թափանցել է ամենուր, և ֆինանսական անկայունության հարուցած վնասները կարող են առնչվել յուրաքանչյուր երկրի, երբեմն նույնիսկ կաթվածահար անելով ողջ տնտեսական համակարգը: Միաժամանակ՝ բազմաթիվ երկրների բանկեր փնտրում են սեփական կայունության ապահովման տարբեր ձևեր, մասնավորապես, մեծացնում են կապիտալի համարժեքության գործակիցը, կիրառում են ռիսկերի կառավարման բարդ համակարգեր, դիվերսիֆիկացնում իրենց գործունեությունն ըստ համապատասխան ուղղությունների, աշխարհագրական ոլորտների, ներդնելով բանկերի և դրանց գործունեության կառավարման նոր գործիքներ և մեթոդներ³: Սակայն, միաժամանակ պետք է նշել, որ համաշխարհային տնտեսության ընդլայնողականացման ներկա պայմաններում մեկ երկրի կողմից վարվող հավասարակշռված ֆինանսական քաղաքականությունը կարող է շատ անարդյունավետ լինել՝ արտաքին աշխարհից անսպասելիորեն ներթափանցած ֆինանսական անհավասարակշռությունների տարբեր դրսևորումների դեմ պայքարում:

Բանկային համակարգի կայունության հետ կապված հիմնական խնդիրները պայմանավորված են տնտեսության և առաջին հերթին դրա իրական հատվածի անկայունությամբ, ինչպես նաև ժամանակակից շուկաներում «խաղի կանոնների» փոփոխականությամբ: Բանկային գործունեությունը համալիր փոխկապակցված գործընթացների ամբողջություն է, որը կախված է բազմազան և բազմաբնույթ գործոններից, որոնցից յուրաքանչյուրը գործում է այլ գործոնների հետ միաժամանակ՝ կանխորոշելով բանկի հետագա գործունեության ուղղությունը:

Բանկային համակարգի կայունության վրա ազդող գործոններն ավանդապես տարանջատվում են երկու հիմնական տեսակների՝ ներքին և արտաքին: Արտաքին գործոնները կախված չեն առևտրային բանկի գործունեությունից և դրա արդյունքներից, իսկ ինչ վերաբերում է ներքին գործոններին, ապա դրանք հանդիսանում են բանկի գործունեության

¹ Банковская система в современной экономике [текст]: Учебное пособие, коллектив авторов, Под. ред. проф. О.И. Лаврушина, 2-е изд., стер. М.: КНОРУС, 2012, 368 с.

² Оценка финансовой устойчивости кредитной организации [текст]: Учебник, коллектив авторов; Под ред. О.И. Лаврушина, И.Д. Мамоновой, М.: КНОРУС, 2011, 304 с.

³ Банковская система в современной экономике [текст]: Учебное пособие, коллектив авторов, Под. ред. проф. О.И. Лаврушина, 2-е изд., стер. – М.: КНОРУС, 2012, 368 с.

արդյունավետության արտացոլումը: Արտաքին գործոններից առևտրային բանկերի կայունության վրա էական և որոշիչ ազդեցություն են գործում ընդհանուր մակրոտնտեսական գործոնները: Դրանց թվին են դասվում ՀՆԱ աճի տեմպերը, ազգային եկամտի մակարդակը, տնտեսության իրական հատվածի ներուժը, հիմնական միջոցների կուտակումը, մաշվածությունը, ազգային ապրանք արտադրողների մրցունակությունը, երկրի վճարային հաշվեկշիռի սալոն (ներմուծում/արտահանում), ռեսուրսների միջոցառման հոսքերի հնարավորությունները, ներդրումների մակարդակը և այլն: Ավստրալիայի և, որ կայուն զարգացող տնտեսությունը հանդիսանում է տվյալ երկրի ցանկացած առևտրային բանկի և ընդհանուր առմամբ, ամբողջ բանկային համակարգի կայունության հիմքն ու ամուր հենարանը:

Համատնտեսական գործոններից բացի, առևտրային բանկերի կայունության վրա բավական կարևոր ազդեցություն են գործում նաև ֆինանսական գործիքները, առաջին հերթին՝ ֆինանսական շուկայի վիճակը և դրանում առկա զարգացումները: Ֆինանսական շուկայի վիճակը հիմնականում բնորոշվում է հետևյալ գործոններով՝ դրամի զանգվածով, սղաճի տեմպերով, վարկային տոկոսադրույթների մակարդակով, արտաքին տնտեսական գործունեության պետական կարգավորման առանձնահատկություններով, պետության տնօրինած ոսկու և արտարժույթային պահուստների ծավալով, արտաքին պարտքի մակարդակով, ֆոնդային շուկայի զարգացվածությամբ և հեռանկարներով:

Բնականաբար, երկրում առկա քաղաքական գործոնները ևս էական ազդեցություն են գործում ինչպես առանձին բանկերի, այնպես էլ, ընդհանուր առմամբ, բանկային համակարգի կայունության վրա: Երկրի քաղաքական իրավիճակը բնորոշվում է գոյություն ունեցող իշխանության կայունությամբ, վերջինիս կողմից վարվող քաղաքականությամբ, ընդդիմության ազդեցությամբ, առանձին տարածաշրջանների կայունությամբ կամ սոցիալական համերաշխությամբ: Այսպիսով, քաղաքական կայունությունը բանկային համակարգի զարգացման կարևորագույն պայմանն է, բանի որ վերջինս պայմանավորում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և համաշխարհային շուկայում նրա դիրքի ամրապնդման հնարավորությունները⁴:

Առևտրային բանկերի կայունության վրա էական ազդեցություն են գործում նաև իրավական գործոնները: Հատկապես՝ օրենսդրության կայունությունն է երաշխավորում բանկային ոլորտում առաջացող խնդիրների պատշաճ իրավական կարգավորման նախադրյալները: Ընդ որում, օրենսդրությունն ազդեցություն է գործում բանկային համակարգի զարգացման վրա՝ բանկային այս կամ այն գործառնությունների կամ գործարքների կարգավորման հատուկ կանոնների և ընթացակարգերի սահմանման միջոցով:

Մեծամասամբ տնտեսական, ֆինանսական, իրավական և քաղաքական գործոններով են պայմանավորված տվյալ երկրում առկա սոցիալ-հոգեբանական գործոնները: Դրանց շարքին կարելի է դասել՝ վարվող տնտեսական քաղաքականության արդյունավետության, հարկային, մաքսային և արժույթային օրենսդրության կայունության, ինչպես նաև տնտեսության և իր առանձին ճյուղերի զարգացման բարենպաստ հեռանկարների հանդեպ հանրության վստահությունը: Վերոնշյալները միասին ձևավորում են նաև առևտրային բանկերի գործունեության հանդեպ ազգաբնակչության և տնտեսվարողների վստահության մակարդակը, բանկային գործառնություններ կատարելու և բանկային ծառայություններից օգտվելու պատրաստակամությունը: Առևտրային բանկերի հանդեպ ձևավորված վստահությամբ է պայմանավորված նաև ազգաբնակչության և արտասահմանյան խոշոր ներդրողների ֆինանսական ռեսուրսների ներգրավման հաշվին բանկերի կողմից տնտեսական զարգացման առկա պահանջմունքների առավել արդյունավետ ֆինանսավորման իրականացումը, ինչը միաժամանակ նպաստում է նաև վերջիններիս կայունության մակարդակի բարձրացմանը:

Առևտրային բանկերի կայունության վրա կարող են ազդել նաև անհաղթահարելի ուժի ազդեցության կամ ֆորս-մաժորային գործոնները, այսինքն՝ տարերային աղետների և անկանխատեսելի իրադարձությունների հետևանք հանդիսացող գործոնները, որոնք հանգեցնում են բանկերի գործունեության որոշակի խոչընդոտների:

Բացի արտաքին գործոններից, առևտրային բանկերի կայունության վրա որոշիչ ազդեցություն են գործում ներքին գործոնները: Վերջիններիս տակ հասկացվում են այն գործոնների համախումբը, որոնք ձևավորվում են անմիջապես առևտրային բանկերի մոտ և անմիջականորեն կախված են դրանց գործունեությունից: Բանկային համակարգի կայունության ներքին գործոնները տրոհվում են երեք խմբերի⁵:

1. կազմակերպչական,
2. տեխնոլոգիական,
3. ֆինանսա-տնտեսական:

Բանկերի կայունության վրա ազդող կազմակերպչական գործոններից են հանդիսանում բանկի ռազմավարությունը, կառավարման որակը, կադրերի որակավորումը, բանկի ներքին քաղաքականությունը և այլն: Նշվածներից բնականաբար՝ առավել մեծ նշանակություն ունի բանկի ռազմավարությունը՝ որպես վերջինիս գործունեության իրականացման հայեցակարգային հիմք:

Բանկի կայունության վրա ազդող ներքին գործոնների երկրորդ խմբին են դասվում տեխնոլոգիական գործոնները, որոնք ներառում են բանկային նոր տեխնոլոգիաների զարգացման հանդեպ բանկի դիրքորոշումը և բանկային նոր ծառայությունների նկատմամբ շուկայի պահանջմունքները:

Բանկի կայունության ֆինանսատնտեսական գործոններից են սեփական կապիտալի ծավալը և կառուցվածքը, եկամտի, ծախսերի և շահույթի մակարդակը, ներգրավված միջոցների կառուցվածքը, դրանց աղբյուրներն ու արդյունավետ տեղաբաշխումը: Տվյալ գործոններն ավելի նշանակալի են դառնում միայն միմյանց հետ փոխազդելիս, որոնք բանկի կողմից պետք է հաշվի առնվեն նաև համակարգային մոտեցման տեսանկյունից:

Հարկ է նշել, որ առևտրային բանկի կայունության վրա ազդեցություն գործելու ունակ արտաքին և ներքին գործոնների ցանկը խիստ անհատական է և կախված է յուրաքանչյուր առանձին վերցրած բանկի կազմակերպչական ու գործառնական առանձնահատկություններից: Մինչդեռ ժամանակակից տնտեսական պայմաններում բանկերի կայունության վրա առավելագույն ազդեցություն են գործում բուն արտաքին գործոնները՝ առաջադրելով բանկերի գործունեությունից կախում չունեցող որոշակի սահմանաչափեր: Ընդ որում, առևտրային բանկերը չպետք է անտեսեն ներքին բանկային գործոնների ազդեցությունները՝ մշտապես բարձրացնելով դրանց որակը և, ըստ այդմ, ամրապնդելով բանկային համակարգի կայունությունը:

Հարկ է նշել, որ բանկային համակարգի համար դիտարկվող գործոնները՝ առանձին վերցրած բանկի դեպքում կարող են այլ կերպ ազդել: Այսպես, օրինակ, ըստ որոշ տեսակետների՝ բանկային համակարգի նկատմամբ վստահության գործոնն

⁴ Тарханова Е.А., Устойчивость коммерческих банков. [Текст] Тюмень: Вектор Бук, 2003, 186 с.

⁵ Тарханова Е.А., Устойчивость коммерческих банков. [Текст] Тюмень: Вектор Бук, 2003, 186 с.

Եական նշանակություն ունի ողջ բանկային համակարգի համար, սակայն, կոնկրետ բանկի նկատմամբ տվյալ գործուն այդքան Եական ազդեցություն չի կարող ունենալ⁶:

Համանման իրավիճակ է նաև ֆինանսական կայունության վրա ազդող ներքին գործոնների դեպքում: Առանձին առևտրային բանկի և, ընդհանուր առմամբ, բանկային համակարգի դեպքում յուրաքանչյուր գործոնի ազդեցության մասշտաբներն ու յուրահատկությունները տարբեր են լինում: Այն, ինչ առանձին առևտրային բանկի համար հանդիսացել է արտաքին գործոն, բանկային համակարգի նկատմամբ կիրառելիս հետագայում կվերածվի ֆինանսական կայունության վրա ազդեցություն գործող ներքին գործոնի⁷:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության բանկային համակարգին, պետք է նշել, որ վերջինս հանդիսանում է ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակից, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների շուրջ 88.4%-ը⁸: Այս պարագայում ֆինանսական հաստատությունների կայունության գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում են հենց բանկային համակարգի գործունեության ռիսկերի բացահայտումն ու գնահատումը:

Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կայունության ապահովումը հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկի հիմնական խնդիրներից մեկը, որը փոխկապակցված է՝ զևեթի կայունության ապահովման խնդրի հետ: Ֆինանսական համակարգի անկայուն վիճակը կարող է խոչընդոտել դրամավարկային քաղաքականության իրականացմանը և դրա արդյունավետությանը, ինչպես նաև երկարաժամկետ ու կայուն տնտեսական աճի ապահովմանը: Միևնույն ժամանակ, դրամավարկային և մակրոտնտեսական կայունությունը նպաստում է ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերի նվազեցմանը:

Ֆինանսական կայունությունը վտանգող փոփոխությունների և տատանումների վաղաժամկետ բացահայտման համար ՀՀ կենտրոնական բանկն իրականացնում է ֆինանսական կայունության շարունակական մշտադիտարկում և վերլուծություն, որի արդյունքում վերջինիս կողմից իրապարակվում են ֆինանսական կայունության հաշվետվություններ՝ կիսամյակային պարբերականությամբ: Դրանցում ներկայացվում են ֆինանսական համակարգի կայունության վրա ազդող հիմնական ռիսկերը, ինչպես նաև ֆինանսական համակարգի՝ այդ ռիսկերին դիմակայելու ունակության ընդհանուր գնահատականը: Միաժամանակ՝ ֆինանսական կայունության հաշվետվությունում ներկայացված են մակրոմիջավայրում և ֆինանսական համակարգում դրսևորված ռիսկերը, դրանց ազդեցությունը տնտեսության ու ֆինանսական համակարգի տարբեր հատվածների զարգացումների վրա:

ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդող ռիսկերը կարող են ծագել ինչպես տնտեսության ներսում, այնպես էլ երկրից դուրս՝ արտաքին տնտեսությունում, և բուն ֆինանսական համակարգում: Այս առումով, ֆինանսական կայունության ապահովման կարևորագույն նախապայմաններն են.

- համաշխարհային տնտեսությունում և միջազգային ֆինանսական շուկաներում բարենպաստ զարգացումները,
- ներքին կայուն մակրոտնտեսական միջավայրը՝ բավականաչափ վարկունակ տնային տնտեսություններով և ձեռնարկություններով,
- արդյունավետ գործող ֆինանսական համակարգը՝ խելամիտ ու կառավարելի սահմաններում գտնվող ռիսկերով ,
- ֆինանսական համակարգի գործառնությունների իրականացմանը նպաստող և անխափան գործող ֆինանսական ենթակառուցվածքները:

Չնայած այն հանգամանքին, որ մեր հանրապետությունում բանկային համակարգը դրական զարգացումներ է արձանագրել վերջին տասնամյակում, սակայն, ժամանակ առ ժամանակ առաջանում են այդ համակարգի կայունության հետ կապված ռիսկեր, ինչի վառ օրինակն էր 2014թ. տարեվերջի արտաթուրային ճգնաժամը: Համակարգային կառավարման մոտեցման բացակայության դեպքում, կախված ինչպես տնտեսության ներքին զարգացումներից, այնպես էլ գործընկեր երկրներում անբարենպաստ իրադարձություններից, հնարավոր ռիսկերի դրսևորումները կարող են հանգեցնել ֆինանսական համակարգի համար անցանկալի, բարդ հետևանքների:

Ներկայումս էլ գոյություն ունեն ՀՀ բանկային համակարգի կայունությանը սպառնացող մի շարք էնդոգեն ռիսկեր, որոնք կարող են դրսևորվել ֆինանսական անկայունության պայմաններում: Համաշխարհային անկայուն տնտեսական աճը, զարգացող երկրների ցածր տնտեսական աճը և հատկապես ՌԴ-ում առկա տնտեսական հիմնախնդիրները բացասաբար են անդրադարձել ՀՀ ներդրումային միջավայրի, տնտեսական և արտահանման աճի ու մասնավոր փոխանցումների վրա⁹:

Վերոնշյալ զարգացումներով պայմանավորված՝ 2016թ. տնտեսական ակտիվությունը դանդաղել է և կազմել 0.2%, իսկ զնաճը՝ -1.1%¹⁰: Այնուամենայնիվ, ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության մեղմացման և կիրառված գործիքակազմի շնորհիվ մակրոտնտեսությունից փոխանցված ռիսկերը կլանվել են ֆինանսական համակարգի կողմից և վտանգ չեն ներկայացրել ֆինանսական համակարգի կայունության համար: Ավելին, բանկային համակարգի կայունության բաղադրիչները 2016թ. չորրորդ եռամսյակում, 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ, կրել են դրական փոփոխություններ: Մասնավորապես, զգալի դրական տեղաշարժ է գրանցվել իրացվելիության և շահութաբերության բաղադրիչներում: Իրացվելիությունը բնութագրող բաղադրիչը բավականին մոտ է պատմական ամենաբարձր մակարդակին, ինչը վկայում է բանկային համակարգի բարձր իրացվելիության մասին:

2016թ. արձանագրվել է ֆինանսական միջնորդության զգալի խորացում. ֆինանսական համակարգի ակտիվների ու ՀՆԱ-ի, վարկերի եւ ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշներն ավելացել են համապատասխանաբար 12.3 և 6.6 տոկոսային կետերով ու կազմել համապատասխանաբար 89.1% և 50.0%¹¹:

Այսպիսով, թեև արտաքին միջավայրից փոխանցվող մի շարք ռիսկերի առկայությունը, եւ շնորհիվ ՀՀ ԿԲ կողմից որդեգրած մեղմ դրամավարկային քաղաքականությանը՝ 2016թ. ֆինանսական միջնորդությունը խորացել է առևտրային բանկերի կողմից տնտեսության վարկավորման ծավալների աճի շնորհիվ, ինչն ուղեկցվել է վարկային պորտֆելի որակի բարձրացմամբ: Միաժամանակ, բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը բարելավվել են բանկերի կողմից կանոնադրական կապիտալի համարումների արդյունքում ֆինանսական միջոցների ներհույսի շնորհիվ՝ նպաստելով ֆինանսական կայունության ամրապնդմանը:

⁶ Немчинова Ю.В., Сущность финансовой устойчивости банковской системы и факторы ее обеспечения на современном этапе, Актуальные проблемы современной науки: материалы Всероссийской научно- практической конференции, Вып. 1. Т.1., Кисловодск, 2-6 мая 2012, Ставрополь: НОУ ВПО «СевКавТИ», 2012. – 194 с.

⁷ Тавасиев А.М., Банковское дело: управление кредитной организацией. [Текст] Учебное пособие, М.: Издательско-торговая корпорация «Дашков и К», 2007. – 668 с.

⁸ ՀՀ ԿԲ 2016 թ. ֆինանսական կայունության հաշվետվություն 2017թ., Երևան

⁹ ՀՀ ԿԲ 2016 թ. ֆինանսական կայունության հաշվետվություն 2017թ., Երևան

¹⁰ ՀՀ ԿԲ 2016 թ. ֆինանսական կայունության հաշվետվություն 2017թ., Երևան

¹¹ ՀՀ ԿԲ 2016 թ. ֆինանսական կայունության հաշվետվություն 2017թ., Երևան

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ԿԲ, 2016 թ. ֆինանսական կայունության հաշվետվություն, 2017, Երևան
2. Банковская система в современной экономике [текст]: Учебное пособие, коллектив авторов, Под ред. проф. О.И. Лаврушина, 2-е изд., стер., М.: КНОРУС, 2012, 368 с.
3. Оценка финансовой устойчивости кредитной организации [текст]: Учебник, коллектив авторов; Под ред. О.И. Лаврушина, И.Д. Мамоновой, М.: КНОРУС, 2011, 304 с.
4. Немчинова Ю.В., Сущность финансовой устойчивости банковской системы и факторы ее обеспечения на современном этапе, Актуальные проблемы современной науки, материалы Всероссийской научно- практической конференции, Вып. 1. Т 1., Кисловодск, 2-6 мая 2012, Ставрополь: НОУ ВПО «СевКавГТИ», 2012. – 194 с.
5. Тавасиев А.М., Банковское дело: управление кредитной организацией. [Текст] Учебное пособие, М.: Издательско-торговая корпорация «Дашков и К», 2007, 668 с.
6. Тарханова Е.А., Устойчивость коммерческих банков. [Текст] Тюмень: Вектор Бук, 2003, 186 с.

*Ներկայացվել է 21.07.2017թ.
Ընդունվել է տպագրության 31.08.2017թ*